Սփյուռքի ներգրավվածության քարտեզավորում
Հայաստան

Փաստեր և թվեր

Արտագաղթ[1]

Արտագաղթածների %-ը ընդհանուր բնակչության կազմում → Որից X %-ը ԵՄ երկրներ





♂ 53.6%
♀ 46.4%

♂ 46.9%
♀ 53.1%

Դրամական փոխանցումների %-ը համախառն ներքին արդյունքում:
1,327 (10.8%)

Առաջնահերթ նպատակակետ հանդիսացող երկրներ

Ռուսաստանի Դաշնություն	527,163
Ադրբեջան	142,650
ԱՄՆ	101,757
Ուկրաինա	47,780
Գերմանիա	21,263

Քաղաքական իրավունքներ

Երկքաղաքացիություն[2] ✓

Համապետական ընտրություններին արտասահմանում բնակվող քաղաքացիների իրավունք՝[3] ⊘

Հասկացություններ. Հայաստանի ազգային օրենսդրությունը չի սահմանում սփյուռք և/կամ սփյուռքի ներկայացուցիչներ հասկացությունները: Սակայն օրենսդիրներն օգտագործում են «ազգությամբ հայեր» հայերեն հասկացությունը: Իրավական ակտերի անգլերեն թարգմանություններում հանդիպում են այդ հասկացության զանազան տարբերակներ՝ ազգային ծագումով հայեր, ազգությամբ հայեր, էթնիկ հայեր, հայկական ծագում, հայկական էթնիկություն[4]:

1 Կարևոր է նշել, որ Հայաստանում էապես տարբերվում են արտագաղթի և Սփյուռքի թվերը, ինչը պայմանավորված է Սփյուռքի երկարամյա պատմությամբ: Գրականության, հետազոտողի իրականացրած հարցազրույցների և ՀՀ կառավարության տվյալների համաձայն Սփյուռքում բնակվում է մոտ 7 միլիոն մարդ, որից 1.5 միլիոնը ԵՄ-ում: Սփյուռքի համար հիմնական նպատակակետ հանդիսացող երկրների ցանկը նույնպես տարբերվում է միգրանտների համար հիմնական նպատակակետ երկրների ցանկից. մոտ 2.5 միլիոն Ռուսաստանում, 600 000 Ֆրանսիայում, 400 000 Ուկրաինայում, 250 000 Վրաստանում, 80 000 Իսպանիայում, 60 000 Գերմանիայում [Հակոբյան Հ. Հ., Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում: Եր.: Հեղ. Հրատ., 2017, էջ 31, 325-328], ՀՀ կառավարության 2017 թվականի ծրագիր, տես https://www.gov.am/files/docs/2219.pdf

2 «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1 հոդված, https://www.refworld.org/pdfid/51b770884.pdf

3 ՀՀ «Ընտրական օրենսգիրքը» սահմանում է, որ արտասահմանում բնակվող ՀՀ քաղաքացիներն իրավունք չունեն մասնակցել համապետական ընտրություններին, տես https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105967

4 ՀՀ Սահմանադրություն (հոդ. 47), տես https://www.president.am/en/constitution-2015/
«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (հոդ. 9, 15, 16, 18) տես https://www.refworld.org/docid/3ae6b4ec2c.html
«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք (հոդ. 1, 10, 12.1, 13) տես https://www.refworld.org/pdfid/51b770884.pdf

Հայաստանը չունի Սփյուռքը ներգրավելու քաղաքականություն

Կառավարությունը տարիներ շարունակ աշխատում է Սփյուռքը ներգրավելու քաղաքականության ուղղությամբ, սակայն ներքին քաղաքականության հետևանքով այն դեռևս չի ընդունվել: Սփյուռքին առնչվող հարցերը Հայաստանում քաղաքականացված են և առաջնահերթ են պետության համար: Սփյուռքի խնդիրները նաև կարևորագույն տեղ են զբաղեցնում երկրի ներքին և արտաքին օրակարգերում: «Հայկական Սփյուռքի հետ կապերը» վերտառությամբ ***ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը***[5] սահմանում է, որ Հայաստանը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

Ընդհանուր ակնարկ քաղաքականության և օրենսդրական դաշտի վերաբերյալ

2002 թվականից ՀՀ Ազգային Ժողովում ընդունման է սպասում *«Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին Օրենքի նախագիծը»*, սակայն ազգային իշխանությունները չեն ցանկանում ստեղծել տպավորություն, որ խրախուսում են արտագաղթը[6]: Պետական մարմինները համաձայնության չեն գալիս երկրում արտագնա աշխատանքների գործընթացի լիցենզավորման և կառավարման հարցերի շուրջ:

2019 ***ՀՀ կառավարության թիվ 65-Ա որոշումը***[7] սահմանում է Հայաստանի և Սփյուռքի միջև համակողմանի համագործակցություն ապահովելու համար կառավարության ծրագրի առաջնահերթությունները, միջոցառումները և պատասխանատուներին: Ծրագրի համաձայն կառավարությունը պատասխանատվություն է ստանձնում գիտական, մասնագիտական, կրթամշակութային, տնտեսական և այլ ոլորտներում համահայկական ցանցերի ստեղծման և զարգացման, Սփյուռքի հայ համայնքների և Հայաստանի միջև կայուն հարաբերությունների ամրապնդման, Հայաստան-Սփյուռք գործակցության խորացմանը և ընդլայնմանը նպաստող քայլերի ու ծրագրերի ընդունման և իրականացման, հայրենադարձության առաջնահերթ խթանման, համահայկական ազգային, հոգևոր, գիտակրթական, մշակութային և այլ կառույցների և համահայկական խնդիրների լուծման գործում նրանց դերակատարման ամրապնդման, և Սփյուռքը ներկայացնող ներկայացուցչական կազմակերպության ստեղծման համար:

2019 ⟫ 2023 ***թվականների Միջոցառումների ծրագրով*** 2020 թվականին կառավարությունը նախատեսում է մշակել և ընդունել «Հայրենադարձության մասին» օրենք: Օրենքի նպատակն է կարգավորել հայրենադարձության գործընթացի իրավական դաշտը՝ հայկական Սփյուռքի հետ համակողմանի կապերը պահպանելու, հայրենադարձությունը խթանելու, Մայր Հայրենիքում հայերին համախմբելու և Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը բարելավելու համար: Այս տեղեկանքը պատրաստելու ժամանակ Գիտության, կրթության, Սփյուռքի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովը՝ Գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համատեղ սկսել էր «Հայրենադարձության մասին» օրենքի նախագծի մշակումը, սակայն այս պահին օրենքի նախագծի պաշտոնական տարբերակ չկա:

5 https://www.president.am/en/constitution-2015/)

6 Bournazian, V. & Harutyunyan, K. (2012): Perspectives on Legal Aspects of Labour Migration. Governance in Armenia. CARIM-East AS 2012/07, տես http://www.carim-east.eu/media/CARIM-East-AS2012-07.pdf

7 «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» 2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության թիվ 65-Ա որոշում, տես https://www.gov.am/files/docs/3562.pdf

Միտումներ

Ընդհանուր միտում. Հայաստանն ունի Սփյուռքը ներգրավելու շատ հարուստ փորձ: Թեև Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է, սակայն հաշվարկների համաձայն Սփյուռքի հայկական բնակչությունը երկու անգամ գերազանցում է երկրի բնակչությունը: Ավանդաբար հայկական Սփյուռքը բավականին ակտիվ մասնակցել է երկրի կյանքին: Աշխարհի շուրջ գործում են Սփյուռքի բազմաթիվ կազմակերպություններ, որոնցից շատերն այժմ մասնաճյուղեր ունեն Երևանում և Հայաստանի այլ քաղաքներում: Ի տարբերություն նախկին Խորհրդային Միության մյուս երկրների, Հայաստանում կա ընդհանուր ընկալում, որ Սփյուռքն ունի հսկայական ներուժ և հայրենիք է բերում սոցիալական ու ֆինանսական կապիտալ: Հայկական Սփյուռքն ամենախոշոր ներդրողն[8] է և համարվում է երկրի դրական ժողովրդագրական զարգացման մեծագույն հույսը:

Զեռքբերումներ

Սփյուռքի ներգրավվածություն. Հայաստանի համար գերակայություն է սփյուռքահայերի մասնակցությունը Հայաստանի սոցիալական, քաղաքական, գիտական, կրթական և մշակութային ծրագրերին: 1999 թվականից Հայաստանը կազմակերպել է Հայաստան-Սփյուռք համահայկական վեց համաժողովներ:

Հայրենադարձություն. Հայաստանը մեծապես շահագրգռված է աջակցել սփյուռքահայերին երկքաղաքացիություն ստանալու և հայրենադարձության մասին օրենք ընդունելու հարցերով: Հայրենադարձության կարգախոսն է. «Ցանկացած հայ պետք է ցանկանա, ոգեշնչվել՝ իր ինքնությունը կապել հայրենիքի, ***հայկականության*** հետ»[9]:

2020 թվականին Համահայկական համաժողովի հիմնական թեման է լինելու «Սփյուռքը և հայրենադարձությունը»: Այն հնարավորություն կտա ուսումնասիրել և համեմատել այլ երկրների հայրենադարձության ծրագրերը և դրանց ազդեցությունը:

Ֆինանսական և սոցիալական կապիտալ. Հայաստանի զարգացման հեռանկարները բացահայտելու նպատակով Սփյուռքի ականավոր հայեր մեկնարկ են տվել Հայաստան 2020 և հաջորդող Հայաստան 2030 նախաձեռնություններին[10]: Այս աշխատանքների արդյունքում ձևավորվեցին Հայաստանի ռազմական գերակայությունները երկրի ներսում և դրսում: Հայաստան 2030 ուշադրության կենտրոնում է Հայաստանի և հայերի երկարաժամկետ աճի հնարավորությունների ռազմավարական վերլուծությունը:

8 ՀՊՏՀ (2015), Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. Զարգացման հեռանկարներ, https://asue.am/en/amberd/research/diasporas-investments-armenian-economy-development

9 Արմենպրես (2019), Ուժեղ Հայաստան – ուժեղ Սփյուռք: Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարն ամփոփում է տարին: https://armenpress.am/eng/news/1000508/

10 https://www.idea.am/armenia-2020

Խոչընդոտներ

- ***Քաղաքականության շրջանակի բացակայություն.*** Փոխադարձ վստահություն ձևավորելու և Սփյուռքի ներդրումներ և նվիրաբերությունների պատշաճ ծախսումը և երկրում դրանց դրական ազդեցությունն ապահովելու համար անհրաժեշտ է պայքարել կոռուպցիայի դեմ և ձևավորել փոխադարձ հաշվետվողականության մեխանիզմներ:

- ***Կրկնվող մանդատներ և լիազորություններ.*** Սփյուռքի կազմակերպությունները և պետական դերակատարները հաճախ ունեն իրար հակասող և/կամ կրկնվող մանդատներ:

- ***Ոչ բավարար տեղեկատվություն և վստահության միջոցառումներ.*** Պետությունը մինչև այսօր չգիտի «որ երկրում ինչպիսի պոտենցիալ ունի Սփյուռքը, ազդեցության ինչպիսի ծավալ: Այս [պետություն-Սփյուռք հարաբերությունների] համակարգը բավարարար չափով կազմակերպած չէ»[11]: Հետևաբար, Սփյուռքի մոբիլիզացիան մնում է ներուժից ցածր: Ավելին, բավականին ցածր է փոխադարձ վստահության մակարդակը[12]:

- ***Հայրենադարձությանն աջակցելու քաղաքականության շրջանակի և տեղեկատվության բացակայություն:*** Պետական զանազան գործակալություններ ընտրված տեղեկատվություն են ներկայացնում իրենց կայքերում: Սակայն գոյություն չունի միասնական հարթակ, որտեղ ամփոփված և հասկանալի եղանակով ներկայացված են մանրամասն տեղեկություններ: Անհրաժեշտ են նաև բիզնեսի տեղափոխմանն աջակցող մեխանիզմներ և ծրագրեր: Պոտենցիալ հայրենադարձները հաճախ վարանում են, քանի որ կա արտասահմանում իրենց բիզնեսները կորցնելու վտանգ և Հայաստանում նոր բիզնես սկսելու հետ կապված անորոշություններ:

- ***Լեզվի իմացություն.*** Հայրենադարձները և նրանց ընտանիքի անդամները, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաները հաճախ, հայերենին չտիրապետելու հետևանքով, դժվարություններ են ունենում դպրոցի ուսումնական ծրագրի հետ:

Արդյունավետ և նորարարական սովորույթներ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Արձագանքում COVID-19-ին

Covid-19-ի համավարակի[13] ընթացքում Հայաստանը վարակի դեմ պայքարում ներգրավել է իր Սփյուռքին: Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակն առանցքային դերակատարում է ունեցել ՀՀ առողջապահության նախարարության կարիքներին համապատասխան Սփյուռքի առողջապահության ոլորտի մասնագետների աջակցությունն առցանց կամ տեղում ապահովելու գործում: Սփյուռքի առողջապահության ոլորտի մասնագետների հմտությունները և գիտելիքներն օգտագործվել են ազգային իշխանությունների հետ միասին համավարակը համատեղ կառավարելու համար:

11 https://www.tert.am/en/news/2019/02/12/nikol-pashinyan/2919488
12 http://documents.worldbank.org/curated/en/301351468206660466/pdf/393810AM0Diasporas0contribution01PUBLIC1.pdf, էջ 6
13 https://www.evnreport.com/readers-forum/armenia-combats-the-coronavirus-state-capacity-and-the-diaspora

«Ներուժ» ծրագիր

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) հետ սերտ համագործակցությամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է «Ներուժ» ծրագիրը[14] սփյուռքահայ երիտասարդ ձեռներեցների համար, ովքեր ցանկանում են Հայաստան բերել իրենց ստարտ-ափ գաղափարներն ու նախագծերը: Ծրագրին կարող են դիմել 18-35 տարեկան սփյուռքահայեր, ովքեր Հայաստանում են ապրել առավելագույնը 6 ամիս: Հիմնադիրներից (համահիմնադիրներից) առնվազն մեկը պետք է լինի հայ: Ծրագրի թիրախային ոլորտներն են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը և նորարարական տեխնոլոգիաները: 2019 թվականի դեկտեմբերին «Ներուժ» ծրագիրը հյուրընկալեց 47 ստարթափներ աշխարհի 17 երկրներից: Վեց ստարթափներ ստացան 15000 - 30000 ԱՄՆ դոլար պետական դրամաշնորհներ:

«Տեղական դերակատարների հզորացում հանուն զարգացման» ծրագիր

Սերտ համագործակցելով ՄՔՄՄԿ-ի հետ Հայաստանի Հանրապետությունը 2020 թվականի ամռանը մեկնարկելու է «Տեղական դերակատարների հզորացում հանուն զարգացման» ծրագիրը: Ծրագրի նպատակն է ավելացնել միգրացիայի հետ կապված ներդրումների թիվը, խրախուսել բիզնեսները և ստեղծել աշխատատեղեր Հայաստանում: Ծրագիրը մշակելու է Սփյուռքի ներդրման բազմազան և նորարարական գործիքներ՝ որպես հայկական բանկերի և ֆինանսական այլ հաստատությունների ապագա ներդրումների սխեմա, և բարձրացնելու է հայ միգրանտների իրազեկումը ներդրումային հնարավորությունների մասին[15]:

«Քայլ դեպի տուն»

Այս ծրագիրը Սփյուռքի երիտասարդության համար կազմակերպում է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: Նպատակն է հնարավորություն ընձեռնել արտերկրում բնակվող հայ երիտասարդներին ճանաչել իրենց հայրենիքը և վերջինիս լեզվամշակութային արժեքներին՝ նպաստելով Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը և Սփյուռքում հայկական ինքնության պահպանմանը: 2018 թվականին «Քայլ դեպի տուն» ծրագրին մասնակցել է 400 հայ երիտասարդ 24 երկրներից, իսկ 2019 թվականին՝ 357 երիտասարդ 28 երկրներից[16]:

Երիտասարդ առաջնորդների վերապատրաստման ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել համայնքներում ղեկավարման կարողությունների զարգացմանը, կազմակերպման ու համախմբման խնդրի լուծմանը: 2019 թվականին ծրագրին մասնակցել է 24 երիտասարդ համայնքային աշխատող 6 երկրներից[17]:

2020 թվականի հուլիսի 1-ին կմեկնարկի Սփյուռքի երիտասարդ մասնագետների պրակտիկայի կազմակերպման փորձնական ենթածրագիր, որի տևողությունը կկազմի առնվազն 12 ամիս: Ա Ծրագիրը ֆինանսավորում է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը[18]: Նպատակն է Հայաստանի զարգացման գործընթացում ներդնել Սփյուռքի փորձագետների փորձն ու գիտելիքները՝ նպաստելով Հայաստան-Սփյուռք գործընկերությանը և «հետադարձել ուղեղների արտահոսքը»:

14 http://neruzh.am/en

15 ՄՔՄՄԿ. «Տեղական դերակատարների հզորացում հանուն զարգացման» ծրագիր – Հայաստանի հայեցակարգ

16 Գերագույն հանձնակատար Զարեհ Սինանհանի հարցազրույց Արմենպրես լրատվական գործակալությանը, տես https://armenpress.am/eng/news/1000508.html, էջ 8

17 Նույնը

18 «Սփյուռքի հայ մասնագետները կարող են մասնակցել Հայաստանի կառավարմանը. նոր ծրագիր», տես https://armenpress.am/eng/news/1001611.html?

Հայրենադարձության աջակցման ծրագիր

Ծրագիրը կմեկնարկի 2020 թվականին և, խրախուսելով հայրենադարձությունը և Սփյուռքում բնակվող հայրենակիցների վերադարձը, կնպաստի երկրի ժողովրդագրական մարտահրավերների լուծմանը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- Հայրենադարձներին և նրանց ընտանիքի անդամներին տեղեկատվության և լոգիստիկ աջակցության տրամադրում.
- Հայրենադարձների և նրանց ընտանիքի անդամների համար լեզվի դասընթացներ.
- Հայրենադարձներին և նրանց ընտանիքի անդամներին բնակարանի հարցում օգնություն և նրանց համար հիփոթեկային վարկավորման տոկոսադրույքներ՝ պետության կողմից կառավարվող համապատասխան իրավական, ֆինանսական և կազմակերպական ծրագրեր ներդնելու միջոցով.
- Փոքր և միջին բիզնեսների համար դրամաշնորհներ (1+1)[19], որոնք հնարավորություն կտան հայրենադարձներին ներդնել իրենց ֆինանսական ռեսուրսները Հայաստանում և իրականացնել իրենց բիզնես գաղափարները՝ դրանով իսկ նպաստելով երկրի տնտեսական զարգացմանը և ժողովրդագրական վիճակի բարելավմանը:

19 Յուրաքանչյուր ներդրված եվրոի դիմաց պետությունը տրամադրելու է մեկ եվրո

Հավելված.

Դերակատարներ

Սփյուռքին առնչվող հաստատություններ

- **Ազգային հաստատություններ**

Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմ
https://www.gov.am/en/staff-structure/

Վարչապետի աշխատակազմի նպատակն է վերահաստատել համահայկականությունը որպես Հայաստանի Հանրապետության գերակայություններից մեկը, որն արտացոլում է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համատեքստում Հայաստանի կառավարության կողմից իրականացվող նոր քաղաքականությունը:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն https://www.mfa.am/en/mission

Նախարարությունը կարևորագույն դերակատարում ունի արտերկրում բնակվող հայերի հետ հարաբերությունները պահպանելու և բարեկամ ու գործընկեր պետությունների հետ համագործակցությունը ամրապնդելու գործում:

Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111201&lang=eng

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովի գործունեության կենտրոնում են գիտության, կրթության, մշակույթի, հայրենադարձության, սփյուռքի հետ հարաբերությունների, երիտասարդության, սպորտի, տեղեկատվության, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության հարցերը և այդ ոլորտները կարգավորող օրենքները:

- Ենթանախարարական

Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակ
https://www.gov.am/en/diaspora-affairs/ https://www.e-gov.am/decrees/item/20354/

Վարչապետի աշխատակազմում ստեղծված Սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի նպատակն է մշակել, իրականացնել և համակարգել Հայաստան-սփյուռք գործընկերության զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը, հզորացնել համահայկական թիրախային ծրագրերը, աջակցել հայրենադարձությանը և բարելավել Հայաստան-սփյուռք համագործակցությունը: 2008 թվականից և մինչև իր լուծարումը 2019 թվականի հունիսին այս գործառույթներն իրականացնում էր ՀՀ սփյուռքի նախարարությունը:

Սփյուռքի կազմակերպությունները Եվրոպայում

Եվրոպայի Հայ բարեգործական ընդհանուր միություն (Եվրոպայի ՀԲԸՄ) 2009 Եվրոպա

Զարգացմանն ուղղված գործունեություն

2009 թվականին Բելգիայում[20] ստեղծված Եվրոպայի ՀԲԸՄ-ը հանդիսանում է միջազգային ՀԲԸՄ՝ հայկական ժառանգության պահպանման աշխատանքին նվիրված խոշորագույն բարեգործական կազմակերպության եվրոպական թևը: Եվրոպայի ՀԲԸՄ մշակում և համակարգում է համաեվրոպական աշխատանքները, որոնց նպատակն է աջակցել ՀԲԸՄ առաքելությանը միավորելով, աջակցելով և մոբիլիզացնելով Եվրոպայում կազմակերպության բազմաթիվ մասնաճյուղերը և անդամներին, ինչպես նաև օգնելով մշակել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող կրթական, մշակութային և մարդասիրական ծրագրեր և կազմակերպել այդ ծրագրերի համար դրամահավաք:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամ[21] 1956 Պորտուգալիա

Հիմնադրամը ստեղծվել է 1956 թվականին Պորտուգալիայի Լիսաբոն քաղաքում հայկական սփյուռքի ականավոր ներկայացուցիչ Գյուլբենկյանի կողմից: Հիմնադրամի հիմնական նպատակն է բարելավել կյանքի որակն արվեստի, բարեգործության, գիտության և կրթության, այդ թվում՝ հայկական սփյուռքին կրթական դրամաշնորհներ տրամադրելու միջոցով:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդ, 2001 Ֆրանսիա

Խորհուրդը[22] ստեղծվել է 1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից իրականացված Հայկական ցեղասպանության մերժողականության դեմ պայքարի ներհամայնքային աշխատանքները համակարգելու, հայկական համայնքի շահերը պաշտպանելու և հանրային քաղաքության խնդիրների վերաբերյալ ընդհանուր դիրքերից հանդես գալու նպատակով՝ միաժամանակ կապ ապահովելով համայնքի և պետական մարմինների միջև:

20 http://www.agbueurope.eu
21 https://gulbenkian.pt/en/
22 http://www.ccaf.info

Հեղինակ՝ դոկտ. Օլգա Գուլինա
Խմբագիր: EUDiF
Մարտ 2020 թ
թարմացվել է 2022 թվականի հոկտեմբերին

RUSMPI UG
Institute on Migration Policy
Think Globally. Listen Properly. Act Comprehensively

Implemented by
ICMPD
International Centre for Migration Policy Development

Funded by the European Union